

Այս բոլոր նախամտածումներու հիման վրայ սպասելիքը թէ Բորթ Արթուրը սովէ ստիպեալ պիտի անձնատուր, ըլլայ շատ հաւանական :

Բեթերայուրկէն կը հաղորդեն այս ամսոյ 10ին հետեւեալը :

Ֆլիսաուր պատճառները, որոնք Գրուարթիկինը պիտի ստիպեն պատերազմական գործողութիւնները ընդհատել մինչև յառաջիկայ գարուն, պիտի ըլլայ պաշարի, վառելիքի և ջրի պակասութիւնը :

Նիմեյսի Ծանչիկո վերջերս պատերազմի դաշտէն հետեւեալը կը գրէ :


Ուտեստի պաշարը և վառելիքը, երկու նիւթեր, որոնք զմեզ աւելի կը անհանգստացնեն :

Բոլոր գետերը սառած են, իսկ սառոյց կտորելու անոր տեղափոխելը և հալելը, խմելու ջուր դարձնելու, այնքան հազար մարդոց և անասունների համար տեխնիքական խնդիր մը կը կազմէ, որը լուծելը գրեթէ անկարելի կը գտնայ :

Ամենէն մեծ դժուարութիւնը փայտի պակասութեան մէջ կը կայանայ, Ձիւղերը պարտաւորուած են ցանքերուն արմատները հանել կրակ պատրաստելու համար :

Մինչդեռ Խունիսուզներուն թիւը հետզհետէ կաւելնայ և ասոնք օր աւուր ուս զօրքերուն վրայ աւելի յանգուգ յարձակումներ կը գործեն :

Ասոնք նոյն իսկ Խարպիսի քով երկաթուղիին գիծը քանի մը տեղ խորտակած են : Վերջերս շատ մութ գիշերէ մը օգտուելով Խունիսուզները տինամիթի բաժնորոններով վեց տեղ խորտակել են երկաթուղիին գիծը : Եւ ուստեքը ի վիճակի չեն ասոնց առջեւը առնելու :



ՓՈՋԱՅՍՍ ՕՍՏՐՈՒԿՈ

(Շար. 662րդ թիւին և վերջ)

—Բայց ինչի՞ զգելի եմ, պատասխանեց ստրուկը աներեսաբար, և կրկին մեզ բաժանող տարածութիւնը կտրելով ինձ մօտեցաւ : Ես ալ հայ մը չեմ, միթէ ինձի արգելիւած է իմ ազգիս ցաւերովը հետաքաքրիլ, այդ ցաւին դարման տանող գործին և գործիչներուն բարեկամ ըլլալ : ձեռքէս եկած օգնութիւնը, իբր պարտականութիւն ազգային ընել :

—Բայց պարոն, այն նկարագրի տէր մարդը, որը դուք ներկայացաք հէնց ձեր նկարագրութիւնով, անկարող է մեծ եւ մաքուր գործով հետաքրքրուիլ : ծայր աստիճան ստորնութեան հասած մարդը անկարող է վայրկեանաբար մաքրուիլ, այնքան բարձրանալ բարոյսպէս, որ կարենայ զոհողութեան փշոտ ու նեղ ճամ-

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐԻՉԷՆ, —)o(— Որոշել... Որոշեցե՛ք... Որոշե՛նք...

Մինչդեռ պէտք էր որ դուրս ըլլային բոլոր հին «երգիչ» անուն կրող բառաչոյցները : պ. Շահ-Մուրադին տրուէր 150-200 ֆր. եւ ժողովրդին մէջէն, սիրողներէն պատրաստուէր խումբ մը, որ երգէր եկեղեցիի մէջ : կրնանք մասնանի ընել 8-10 երիտասարդներ որոնք ամիսը 15-27 ֆրանքով պատրաստ են եկեղեցիի մէջ երգել և այդ դրամը իրենց համար օգնութիւն մըն է : ինչու 40-70 եւն ֆրանք վճարուի ամսական 200-400 ֆր. շահել կրողներուն և ինչու չը վճարուի 15-20 ֆր. աւելի ընդունակներուն և անկարողներուն : Ինչու եկեղեցիին դոնացան և մամուկոյ ըլլալու համար 10 հայ ներկայանայ, անոնցմէ ոչ մէկը ընտրուի ու իր կեանքը ապահովէ, անգին ընտրուի ֆրանսացի մը ամիսը 150 ֆր.ով և մասնաւոր բնակարան ալ ունենայ : Բայց այս ինչուներու շարքին մէջ աւելցնեմ և ուրիշ մը որ եթէ ըլլան էգնականը պաշտպանողներ անոր ալ պատասխանեն : էգնական ի՞նչ որը շահագործող չէ, ինչու փոխանակ 8 տարեկանէն 15 տարեկան տղայք իր գործարանը առաջնորդելու և զանոնք իր գործարանին մէջ փոստեցնելու, իր գործարանը չը տարաւ 15-20 տարեկան հայ երիտասարդներ որոնք քաղաքի ծախելու անպատուարներ և տառապելի միջոցին գիտելով կապին, եթէ ազգին բարիք ընել էր թող տանէր էգնական իր գործարանը այդպիսիներ և 8 ամիս անոնց ձրի (հացի փօր) աշխատեցնելով արհեստաւորներ դարձնէր : Ֆրանսացիները 6 ամիսէն կը սորվին, էգնականի որդին չորս ամիսէն սորված է : միթէ՞ հայ երիտասարդները այնքան ապուշ կըլլային որ ութ ամիսէն չը կրնային սորվիլ : բայց էգնականի միտքը ուրիշ էր... Թէ ինչ էր էգնականի միտքը և թէ ինչու փոքր որբեր առաջնորդեց իր գործարանը էգնական ամիրան, գիտնալ ցանկացողները իրենց պատասխանը կրնան զանալ երկու կու սարի առաջ շարժատան ֆոնդնայի, խաչազող Թոմասանի և որը շահագործող էգնականի որբերու խն-

բան մտնել : ձեզ նման բարոյական հրէշներին բուժելու համար մի մի Պրօպագանդիստ աւագաններ պէտք են : այդ էլ հիմա գոյութիւն չունի : Սակայն խնդրում եմ թողէք, ինձ, հեռացէ՛ք : —Բայց ոչ, նստինք այս տեղ մէկ մէկ բան խմենք : խնդրեմ մի զըլցեցէք, այդ պատիւը ըրէք ինձի : հայվանի պէս մեծցած մարդ մըն եմ : Ես ալ կո գեմ այսուհետեւ քիչ մը մարդ դառնալ : մարդոց հետ նստիլ կայնիլ, կը զգիք ինձմէ, կամ իմ նմաններէս : բայց իրաւունք չունիք մեզմէ փախչելու որովհետեւ ալ անդին մարդ չի մնար, որոնց հետ գործ ունենաք : հայութեան մեծ մասը ինձմէ և իմ նմաններէս կազմոված է : ո՛ւր պիտի փախիք մեզմէ, տեղ չը կայ որ փախելու : ատ ուրիշ խնդիր թէ հայութեան ըտրորովին դուրս ելլաք, հայուն գործովը չըզբաղիք : ան ստին ըսելիք մը չունիմ : եկուք, եկուք մօրուքդ սիւնի, եկուք նստինք, այս կը հասկնամ փշոցած ստրուկ մըն եմ, ու ինձի պէս շատ շատերը այդպէս են, ու չէ որ ձեր նպատակն ալ ատ ստրուկները մարդ դարձնելն է : ինձմէ փախիս, տասնեակ հազարաւորներէն փախիս, ալ որու հետ պիտի գործես, կամ գործէք : դուք մին միտակ Հայաստան ստեղծել չէք կրնար, քանի հոգի էք որ, մեզով պիտի ստեղծէք, մեզմէն ալ փախիք, ալ որո՞ւ հետ եւ որո՞ւ միջոցաւ գործ պիտի քաղցնէք : Ստրուկը այդպէս ճանկէն փշիցս ընած տարել էր մօտեցրել պարսէզի բիւֆէի սեղաններէ մէկին, ու մինչեւ իմ ուշքի գալը նրա արտասանած սինիքը և մասամբ դառն ճշմարտութիւններով լի ճառից նա գոչեց թուրքերէն բարբառով :

—Գարսօն, երկու գարեջուր բեր : Այլևս շատ մեծ կոպտութիւն համարելով հեռանալը նստեցի : ստրուկը շարունակ ճառուէր մէկ մէկ թելելով իր Թուրքիայում անցկացրած

դիրներու աթիւն «Գուրանի տնօրէնի իր ամսագրի մէջ հրատարակուած Մի' խորխու ու անական չեշ, տին մէջ՝ որ արտատպած են հայ թերթերը մէկ քանի անգամ և յարկ է որ մենք ևս անգամ մը յիշենք : Մի'...

Վերջապէս չենք կրնար դնել էգնականի և էգնականներու ընթացքին Ձեռք ալ կրնար որոշել անոնց սեղը, այդ բանը հայ մամուլը և հայ ազգը պէտք է ընեն : Իբր հայ ազգի մէկ անհատ մենք իրաւունք ունինք սահայն մեր կարծիքը տալ :

Ա. էգնականի ըրած մասնութեան վրայ պէտք է ուշադրութիւն դարձնեն հայ յեղափոխական կուսակցութիւնները և կամ անոնց ամենէն հեղինակաւորը : պէտք է քննեն էգնականի մասնութեան պարագան և էգնականի դատապարտութեան պարագային, իբր տուգանք պահանջեն էգնականէն 3 միլիօն ֆրանք :

Բ. Փարիզի հայ գաղութը եւ բովանդակ հայ ազգը պէտք է պահանջեն էգնականէն որ առանց ազգի թը թին խնդարու հատուցանէ այն 100000 ֆրանքը կամ տուը որ հայոց եկեղեցիին նուրիւ խոստացած է և հակասականագրական օրէնքներով իր թիկնածուներու միջոցաւ ինքզինքը երեսփոխան (թաղական) չանուանէ :

Գ. Իր որդեգրած որբերու ապագան ապահովէ :

Դ. Բասմալեանի և Ղուճուրեանցի ղէմ իր արբանակի բացած խայտառակ դատերը ետ առնէ՝ ներողութիւն խնդրելով հրապարակաւ ու ամէնքին բաւականութիւն տալով հայ անուան վեց դատարաններու առջեւ քաջկատուելու առաջին անգամ :

Այս է մեր կարծիքը :

Փարիզի Փարիզի հայութեան. — Փարիզը, իբրեւ կեդրոն Եւրոպայի հայութեան և իբրեւ Եւրոպայի հայ ընդհանուր առաջնորդի աթոռանիստ քաղաքը կրնայ և պէտք է գործադրէ ազգային սահմանադրութիւնը իր ամբողջ կէտերով : այն սահմանադրութիւնը որուն համար այնքան աշխատած են մեր հայրերը : Այսպէս, այն ատեն Փարիզը հայ գաղութը կունենայ իր բոլոր անգամներու (այն բոլոր հայերու, որոնք տարիէ մը ի վեր Փարիզ կը գտնուին՝ բացի ուսանողներէն՝ ինչպէս և զաւ. Եղիպտոս)

քուէարկութեամբ ընդունուած թաղական (երեսփոխան) խորհուրդը և, որուն եթէ անգամ ընտրուէին երկու գահարկուած աղա, անհրաժեշտ է որ ընտրուի նաեւ մէկ ուրիշ ճիշդ պատկանող վաճառական մը, մէկ աշխատուող կամ գործաւոր և մէկ խմբագիր կամ գրագէտ՝ այս վերջինը իբրեւ ատենադպիր :

Փարիզի հայ գաղութը թաղական խորհուրդին զատ անհրաժեշտ էր որ ունենար նաեւ մարմին մը, այսինքն ատենապետէ մը, տանադպրէ մը և 2-3 խորհուրդատուներէ կազմուած հեղինակաւոր գիււան մը որ յարկ էր զած պարագային կարենար հայ ազգը և ազգային իրաւունքները պաշտպանել : Մանթաշահան և Պօղոս-Փաշան, երկու առատաձեռն անձնաւորութիւններ, որոնց մէկի շնորհիւ հայերը եկեղեցի մը ունեցան և միւսին միշտ կը բարեբարութիւն (՝ որոնց կուրծն ալ կը յարգուին թէ իրենց բովանդակ ազգէն, թէ Ֆրանսական կառավարութեան և ժողովրդէն և տարուան մէջ 4-5 ամիս Փարիզ կան, ցունեն՝ արժանեւորուն անձերն են այդպիսի մարմնոյ մը անդամներ ըլլալու համար : Այդ մասնախումբին իրեւ ատենադպիր կարելի էր քուէներու առաւելութեամբ ընտրել Փարիզի մէջ գտնուող չորս հայ խմբագիրներէն մին՝ Պ. Պ. Մեծատուրանը կամ Զօրագեանը, Բասմալեանը կամ Զերագեանը : Իսկ իբր խորհրդատու կրնային ընտրուիլ ուրիշ երկու անձեր, օրինակ Պ. Պ. Փեհիւ վանեան, Յովակիմեան, Սըքեան եւն :

Եթէ այս հիման վրայ, ու կամ թերեւս աւելի լաւ ծրագրերներու հիման վրայ որ կրնան դիւր ինձմէ լուրեր իշխել, — կարենայ ընթացիկ Փարիզի հայ գաղութը, պիտի ունենայ թաղական խորհուրդը :

Պաղարք սերմեր ցանուած են և մենք կը յուսանք որ լաւ ցանք լաւ

(*) Պօղոս-Փաշան իր դեռատի որդւոյ մահուան առթիւ Փարիզի հայոց Բար. ընկերութեան և եկեղեցիին 20,000 ֆրանք նուիրած է՝ վերջինս հակառակ էգնականի իբր ընթացքին, որ արգելած է քահանան շարքի վերջեր մեռելի վրայ հսկում կատարել, և այս, սատր առարկութիւններուն, Պօղոս-Փաշայի առաստաձեռնութիւնը խոշոր ապակի մըն է որ կուգայ պայթեցնել էգնականի անսուտ երեսը :

կեանքի դուրսները, չափազանց աղտոտ գծերով ու պատկերներով կարծես իբր հաւատարիմ քրիստոնեայ հաղորդութեան մօտենալու տենչով այրված թափու մէջ էր իր մեղքերի կոյտերը քահանայի առջեւ նրանց թողութիւն ստանալու անկեղծ տենչով պապակած :

Ես գիտում էի այդ ինքնաքննադատի իւզոտ, ճարպոտ գէմքը, անասնային սուղու անմիտ աչքերը մի անկեղծ, խոհուն նաւածք գտնելու այդ քաւուհի անկեղծութեան մէջ : Սակայն ի գուր, լանքերս ի գուր անցան : Ստրուկի ապուշ աչքերում երկար ու բարակ թափառելից յետոյ են աւելի յուսահատ, աւելի զգած աչքերս ուղղեցի ծովի անհունութեան մէջ ու անձնատուր եղայ իմ խոհերին, որոնք շատ ու շատ ծանր էին երիտասարդ գեռ ժողովրդի վերայ իբէտակական համոզումներ ունեցող երիտասարդ իս համար :

Հունիս 28-ին տալիս — յոյսերնիս պիտի իրականանայ :

ՀՐԱՅՐ

1904 Նոյեմբեր 1/14

Փարիզ

ՈՍԿ ԹՈՒՍ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄԻԱՅԻՐ

Առատուուն կանուխ այն լուրը թէ 3000 ճարտարներ կը պատրաստէին Արեւելեան պատնէշը շրջապատել ժամանակին իմացեցաւ ու միջոց առաւ պէտք եղածին չափ զինուոր զորակերով նախաշարժակները հարածեւ առանց թոյլ տալու այդ ուղղագիտական գիւրքը գրաւելու :

1600 հոգիէ բաղկացած երկու խումբ Պետր Լոստովիչի հրամանատարութեան տակ շտապով զրկեցան այդ գործին համար : Իրենց հրամայեցաւ թշնամիներու մինչեւ վերջինը անկացնել : Եւ բոլոր ձայները պատասխանեցին թէ «Ռուսի ստորատաս կարելի եղածը պիտի ընեն :

Թնդանօթածիկները այդ շարժման պիտի հետեւէին : Այլեւ ժայր մտնելու ժամանակ Պետր Լոստովիչ պատերազմը շահած ըլլալով, բանակապետը վերադարձաւ իր զինուորական կէս թւով միայն :

Ինչը ժամ կաւած էին, և կարելի էր ենթադրել թէ թշնամիները բոլորը կամ մոտաւորապէս շարժած էին՝ որովհետեւ նահանջուած ոչ մի շարժում չէր նկատուած :

Ջերմապէս շնորհաւորած՝ Լոստովիչին ինքն ալ իր կարգին զինուորները շնորհաւորեց՝ մատակարարին ձրի խնամքի բախուելու համար դրամ տալով : Յետոյ պահանջեց որ մասնաւոր վարձատրութիւններու համար լաւագոյն կուտուցուէր ցոյց տան :

Միւս կողմէն՝ ամենքն ալ Սիպիւրիայէն եկած թափար մը՝ Սահ-Թարասը ցոյց տուին, որը թնդանօթի բերանէն արձակուած ուռմիւրի մը պէս հետեւակներու քառակուսի մը մէջէն միակ ճամբայ էր բացած՝ երկք անգամ առանց սկիւթուքի աք երթիւնելը ընելով, և սուրբը ճեղքած գանկերու ու կարած գլուխներու ալիքներու մէջ թիփարելով :

— Կամաւո՞ր ես — հարցուց Պետր

Լոստովիչ — ուղղակի կովկասէն կուգաս :

— Ո՛չ, տասը տարի Սիպիւրիայ անցուցած եմ, քարտական և պահեստի եմ :

— Աքսորած, թիարանի մէջ ապրեցար : Ժայռի կտորնե՞ր տեղափոխեցիր, ի՞նչ ոճիւր գործեցիր, դո՛ւն, որ այդքան աղնւորէն քաջ ես :

Լէզկին սեւ նալաւք մը մխրճեց իր յիշատակներուն խորը :

— Չհօրան կիներուն մէջ այնքան գեղեցիկ էր որքան Երեւանի վարդը ծաղիկներուն մէջ : Չհօրան ինքզինքը ծախեց հարուստ մարդու մը : Բայց ես ծաղիկը համարյո՞րն տակ կտրեցի, այդ երիտասարդը և աղջիկը սպաննելով :

— Դո՛ւն, ուրի՞նք մարդասպանութեան մը համար թիարան գացած ես :

— Սո՛ւ, ննիսսպայ մը բացատրեց :

— Կրցած է հաստատել թէ զինքը խարած և գոգոտ էին : Առանց այդ կախուած կըլլար թիարանի մէջ խոնարհ և աշխատող է եղած : Զօրակոչի ժամանակը նոթիւր տեսայ : Ծաւր տարի յետոյ ներման հրովարտակ մը զինքը ազատ քարտեղի պայմաններուն մէջ դրած է : Պատերազմի սկզբին՝ երբ Անդրապայթալեան կողմերէն պահեստիները հաւարեցան՝ իր թիւը ելաւ և անմիջապէս Բօրգ-Արթիւր զրկուեցաւ :

Լոստովիչ ըսելու վրայ էր թէ ինչ վարձատրութիւն կը վերապահէր թափարին՝ երբ յառաջագահ դիմերէն վազող մարդէ մը խանգարուեցաւ :

— Վեց հարիւր... եթէ հարիւր ճարտարներ... ճամբուն վրայ... — գոչեց զինուորը շնչապատ եղած՝ գաշալ ցոյց տալով :

Գիշերը վրայ հասած էր : Հեռուն լաւ չէր տեսնուեր, բայց Լոստովիչ իր բանակապետին քով ցոլացուցիչ մը ունէր, զայն գարնուց, և սպիտակ լոյսի ուժով ճառագայթ մը դաշտը լուսաւորեց :

Գնդակի մը հասնելու մոտաւորութեամբ՝ արդարեւ քանի մը հարիւր ճարտարները նշմարեցան :

Օրւան կռիւն մնացածներն էին՝ որոնք վերջնական շարժէն կրցած էին ճողոպրել :

Աղջամուղջին միացած էին, և խաչած միջիւններու նման դանդաղօրէն, դժուարութեամբ, իրար կոթնելով,

կապարով արահետներէն կը փախչէին :

Լոստովիչ ձիաւորներ դրկել ուզեց, բայց գրեթէ անմիջապէս ետ կեցաւ այդ մտքէն, յաղթական կերպով մը ըսելով :

— Տիմարնե՛ր, նեղ ճամբաները կը ձգեն մեծ ճամբէն երթալու համար... հաշիւնին կարգին է :

Պաշարման սկզբին՝ արդարեւ այդ անցքը պահուած էին, և ականը Լոստովիչի պատնէշներուն հետ կը հարդարակցէր :

Վերջինս Սահ-Թարասին կանչեց :

— Դո՛ւն, երիտասարդութեանդ մարդ մը ու կին մը սպաննեցիր... իսկ այսօր ո՞րքան սպաննեցիր :

— Առնւաղն՝ հարիւր :

Սպանիւրի մացառներուն մէջ կէս պահուած մետաղեայ փայլուն կոճակ մը ցոյց տուաւ :

— Ուրեմն պատիւը քուկդ է, ինձ տես, ձեռքդ այդ կոճակին վրայ դիր, և երբ նշան ընեմ, կոխէ՛... ուշադրութիւն... գնա՛ :

Սահ-Թարաս առանց հասկնալու հնազանդեցաւ :

Մէկ ութերորդը բռնեց... մէկ քանորդը բռնեց... յետոյ ահուկի պայթում մը որոտաց գիշերան մէջ :

Վարը ճամբուն վրայ կարմիր ծուխի սիւն մը բարձրացաւ պատուած գետնէն ու միւս կողմէն ժամանակ ցուցուցիչին ճառագայթը ցոյց տուաւ հազարաւոր ցնորական առարկաներու ժայթքում մը, ցրցքնում մը, որոնք բազուկներ, գլուխներ, կօշիկներ, հրացաններ, սուրբ գլխարկներ էին. յետոյ այդ բոլորը կարկուտի մը պէս վար թափուեցան զանազան ուղղութեամբ :

Լոստովիչ հազիւ յուզուած՝ եւ արդէն հեզնոտ՝ դիտակով մը կը նայէր :

— Լաւ, թափար. դեռ այս տեսակ բան մը ըրած չունէիր... 600 հոգի սպանուելուն մըլ :

Սահ-Թարաս առիկ քան հասկցած էր հիմակ : Ամօթի եւ յուսահատութեան գաղտնի թիւն մը իր դէմքը ծածկեց :

Դաւոյնը բարձրացուցած սպային վրայ յարձակեցաւ :

— Դո՛ւն՝ որ ինձ հրամայեցիր, դո՛ւն ես վատը... դո՛ւն ես մարդասպանը... վերաւորներու սպաննող...

Չարնելու վրայ էր :

Երկու քօզքներ բռնեցին ու գետին տապալեցին :

Լոստովիչ՝ որ սպանալիքին տակ հազիւ ցնցուած էր՝ այդ նախատիքներուն առաջ սարսուռաց... բանակապետին մէջ խորազնիկ պատճառը վարող ստորադաս սպայի մը ցոյց տուաւ թափարը :

— 50 մտրայի հարուած այդ վարիւնին, հրամայեց :

Օրւան հերոսը բարձրաւանդակի մը վրայ պառկեցուցին, հազուստները հանեցին, եւ հաստ չւաններով հիւստած երկօր ու ամուր մարակը անոր կոնակին վրայ սուլեց :

— Մարդասպանը դո՛ւն ես, վատը դո՛ւն ես, կը մոնչէր դեռ անիկա, Աւելի ուժով սկսան վարել :

Բայց շարունակող մտրակի հարուածները՝ որոնց իւրաքանչիւրը արիւնի լայն շերտեր կը հանէր՝ չը կրցան գոցել անոր նախատող բերանը մինչեւ այն թոպէն՝ երբ բարկութեանէն խեղդուած՝ քուստուներով հարուածին տակ իր վերջին խորթոցը արձակեց :

Գաւիլի Տր Սենթ-Քոնուս Թարգ, ՀՐԱՆՏ Բարիզ

Պատ. Ամբադրութիւն "Շարժումս լրագրոյ" Վառնա

Շումայի Պետու-Պուլկարացիս բնթերցարանի վարչութիւնը պարագ կը համարի իրեն աւետել, որ ընթերցարանի վարչութեան քաղաք պետութեան անդամ Տիար Սողոմոն Պոյաճեան մօտ ըրած խնդրանքին եւ յիշեալ արդոյ անձին քաղաքապետական ժողովոյ արջեւ ցոյց տուած զընահատելի ջանքին շնորհիւ քաղաքապետութիւնը հայոց թաղը երեք գլխաւոր բաժանումներու վերածելով ընթերցարանի շէնքէն սկսած փողոցը «Պետու-Պուլկարացի» եկեղեցոյ փողոցը շէնքի եկեղեցիի փողոց» եւ այս երկու փողոցներու միջեւ գրտնուած փողոցը «Լօրիս Մէլիքով» անուններով գործեց :

Վարչութիւնն ներկայիս իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ թէ քաղաքի քաղաքապետութեան արդոյ անդամներուն եւ թէ մասնա-

— Ա՛յն մասը ինձ նման են — եթէ ինձմէ, անոնցմէ պիտի փախիք, ալ որո՞ւ հետ գործ պիտի ունենաք : ստրուկի արտադրած այդ միտքը միայն էր իմ ուղեղումս :

— Միթէ մեծամասնութիւնը ոչսպասեալ է հայ ցեղի. եթէ իրապէս այսպէս է, իսկապէս ո՞ւմ հետ պէտք է գործնք. ոչ անկարելի է որ տոյսպէս ինի, անկարելի է որ հայութեան մի խոյր զանգվածի իրական մարմնացումը այս խոզացած տիպը լինի : Այդ արդէն յուսահատական կը լինէր : Դեռ պէտք էր քաշել հայութիւնից նրա համար փայլուն սպազայ ստեղծելու երազներից... :

Բայց միթէ դիւրին է հանրային բախտը փայլուն գծերով որոշող երազներից ձեռք քաշել. ոչ. ուրիշմ երազողները իրենց ճամբով կերթան, զլուխները զարկելով քարերին ու պատերին, այս խոզերն էլ իրենց ճամբով... Բայց մինչեւ ե՞րբ... մինչեւ այս արիւրի ողջացումը. հապա-

ժառանգական անողք օրէնքը, միթէ արանց շին յաջողորմութեան իրենց նոյնչափ խոզացած, նոյնչափ սպուշ. նոյնչափ ստրուկ գաւակները, որոնցից պէտք է կազմուեն հայ քաղաքացիները :

Մինչդեռ ես այդ լուրջ խոսքի մէջ էի, մոռացած ըրիւրան, մոռացած իմ պատահական ստրուկ աներես բաժակակիցը, կրկին լսեցի նրա քծնող ձայնը :

— Բայց միւսիւ, ներողութիւն, պիտի հարցնեմ ձեզի, արդեօք նորէն Պոլսոյ մէջ դէպք մը պիտի պատահի : — Ի՞նչ դէպք, բարկացած հարցրի ես ստրուկին :

— Պանքայի դէպքին պէս դէպք մը ես հոն գործեր ունիմ. եթէ պատահի խնդրեմ ինձի նախապէս իմաց տրուէր. ես թէ կազմակերպութեանը եւ թէ ձեզի կը վարձատրեմ : Գիտէք, ես իմ այդ գործերովս կապրիմ. ուսմիկ մարդ մըն եմ, փարաներս ձեռքս ելլան էլ միայլ շարժեմ :

կուստուրա անգամ ներկել չեմ կրնար :

— Հա, հիմա հասկացայ թէ այդքան քծնումները ինչի համար էին. այդպէս էր ուզում զինուորագրվել հայ ազատագրութեան գործին. ոչ զորմիտ արարած, դու կարծում ես թէ ինձ կաշառք խոստանալով, մի քանի ոսկի գոնելով կարող ես քո ստրկական գոյութիւնը քարշ տուող ամենաաղտոտ միջոցներով ձեռք բերած դեղին ոսկիները փրկել. գոչեցի ես այդ աներես ստրուկի երեսին եւ առանց ընթացի գաւաթին ձեռք գրպանելու ես քաշվեցի սեղանից, հարիւր անգամ հայնոյնով ինձ որ զիջել էի այդ թրքական կեանքի հարողատ ծնունդի հետ նստելու :

— Բայց, միւսիւ, էֆէնտիմ կաղաչեմ, ի՞նչու կընեմ ինչո՞ւ կը բարկանաք. ես հայ ազգը սիրող մարդ մըն եմ. բայց կաղաչեմ իմ ունեցած չունեցածս փրկել, ձեզի ալ աղէկու-

թիւն մը կուզեմ ընել. ունեցածս երկու երեք հազար ոսկիէն աւելի կարծեմ. 300-500ը քեզի, կուզես կազմակերպութեան կը խոստանամ, միայն դուն ժամանակին ինձի իմացուր :

Այս խոսքերը դեռ չը վերջացած յանկարծ թրքական ստրուկը օձից խայթվածի պէս տեղիցը վեր թռաւ :

— Մնաք բարով էֆէնտիմ վերջը կը տեսնվինք, մարդ կուզայ կոր, գիտէք աղէկ չէ, որ զիս ձեզի հետ տեսնան : Ու մկան պէս փախաւ :

Ես ապչեցի. միւս կողմ նայեցի. մէկ էլ տեսնեմ թուրք հիւպատոսը ինչ որ մի մարդի հետ գայիս է ձե. մեկիքի ծայրից... :

ՎԱՐԴՕ

Արապէս Տիրար Սողոմոն Պոյաճեանի.

Ընդունեցէք կանխաւ սեր խորին շնորհակալիքը

Պետո Պուլկարացիս ընթերցարանի վարչութեան քարտուղար

Պ. Ն. Պոյաճեան

(Կնիք)

12 հոկտ. 1904

Շուսէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

ՊՔՐ. Յայնժուսկա թերթը կսէ որ անգլիական ընկերութիւններ, որուն վարչները կարեւոր գրածատէրներ են Սուլթանին 50 միլիոն ֆրանկի փոխառութիւն մը առաջարկեր է չափազանց մատչելի պայմաններով. եթէ միայն Սուլթանը համաձայնի Սիրիոյ և Պաղեստինի բոլոր գաղթականութիւնները ալ ք ֆիրմային անուանը գրել, որոնք ներկայիս մասնաւոր զանազան մարդոց կը պատկանին. Սուլթանը այդ ընկերութեան պատիրակը ունկնդրելու ընդունած է բայց զեռ վերջնական պատասխան չէ տրուած:

Աթինայէն կը հեռագրեն որ յոյն հրոսակապետ Միլաս ոչ թէ թուրք զօրքերէն սպաննուած է կուր մէջ. այլ իր ընկերներէն միոյն ձեռքով:

ՌՈՒՍԻԱ

Նոյեմբեր 13ին Բեթերսպուրկէն Պ. Ք. թերթին կը հեռագրեն հետեւեալը.

Ներքին գործոց նախարարը Բիէվի քաղաքային վարչութեան յայտներ է որ Ռուսիոյ քաղաքներուն ներկայացուցիչներուն ժողովը ինչպէս եղաւ զեմսաօններունը, Յարին հաւանութեանը արժանացաւ:

Սեւաստաբոլէն նոյեմբեր 14ին կը հեռագրեն որ, խոսովութիւններ տեղի ունեցեր են չընորհիւ քաղաքական գրգռումներու:

Քաղաքին զանազան կողմերը կոչեր գտնուեր են, որոնք ծագելիք խոսովութիւնները արագացուցած են. 20ի չափ զինուորներ հաւաքուեր են զօրանոցի երկրորդ բակին առջեւ ու սկսեր են պատուհանները փշրել:

Ատկէ անմիջապէս վերջը մեծ քանակութեամբ ամբոխ հաւաքուեր է, որոնց մէջ գտնուեր են և նախադիմելու զգեստներով ծպտեալներ: Ամբոխը ձեռքը ընկածը շարք ու փշուր ըրեր է, Պահակազօրքին մէկ մասը պարտաւորուեր է գալ կարգը վերահաստատել և ստիպուեր է զէնք գործածել:

Կարգը շուտով վերահաստատուեր է և յուզումը ընդարձակ կերպարանք չէ ընդուներ, ինչպէս կսպասուէր:

Նոյեմբ. 18ին Բեթերսպուրկէ կը հեռագրեն որ Յարին հրոսակապետը Ալէքսիեւ Մայրազոյն Արեւելքի հրամանատարութեան պաշտօնէն կարձակուի:

Թիֆլիսէն ստացուած անգլիկութիւններու համեմատ խօլերան երեւանի նահանգին մէջ սաստկացած է. նոյեմբեր 15 այդ շրջանին մէջ 65 մարդ մեռեր է. Նախիչեանի գաւառին մէջ 85 մահուան գէպքեր պատահած են:

Ռուսական այս տարուան զինուորականութեան մէջ անպէտք հրէաներուն թիւը շատ չնչին է. Այդ պատճառով շատ մը հրէաերիտասարդներ խմբերով կը փախան. Քիշնեւի զինուորական նշանակուած հրէաներուն միայն 30 6/0 ներկայացած է. Խերսոնի շրջանին մէջ փախող հրէա զինուորացուներ թիւը հարիւրին 50 է. Սիմֆերոպոլի մէջ հարիւրին 90:

Յարը լեհական ազնակ պատգամաւորութեան մը յայտներ է ի պատասխան անոնց հաւատարմական զգացմանց արտայայտութեան, որ Ռուսիոյ վիճակուած ներկայ փորձութիւնները նոր շրջան մը պիտի բանան առաջը կեանքին մէջ և ցեղերուն ու կայսրութեան մերձեցումը պիտի առաջ բերեն:

ՌՈՒՍ ՍԱՀԻՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԻՏԸ

Մշակուած և արդէն Յարին ներկայացուած նախագիծը իսկութեամբը դեռ ոչ մէկ տեղ յայտնի է. բայց որչափ մինչեւ օրս կիմացուի զանազան ազդերներէ այդ նախագիծին մէջ հետեւեալ կէտերը կան. Վերացում ներկայ պետական խորհուրդի. ամեն 21 տարեկան առաջինը զական իրաւունք պիտի ունենայ, բացի ոստիկանութեան և զինուորական ծառայողներէ. Երեսփոխանական ժողովը երկու պիտի ըլլայ վերին և ստորին: Վերին ժողովը պիտի ընտրէ կայսրութեան գանսիքը. Յարը կը մնայ զինուորականութեան բարձ. հրամանատարը և ինք կարող է պատերազմելու գաշխեմեր կապելու խնդիրները լուծելու համար, ժողովներու և մամուլի կատարելազատութիւն, ներումը ընդունաւարկեալներուն և քաղաքական փախստականներուն. Մրագրի մէջ կը պահանջուի նաեւ զեմսովոն ազատ թերթ մը հրատարակէ մինչեւ մամուլի ազատութեան հոշակումը:

ՃՐԱՆՍԱ

Նոյեմբեր 12ին Անէսի մէջ երգուեալ գոտաւորները բանտարկելութեան և 12 հազար ֆրանքի տուգանքի դատապարտեցին գործարանատէր Կրէտիէի երկու որդիները որոնք գործազուլ ըրած բանտարաններուն վրայ հրապէն պար պած էին:

Կոմր երեսփոխանական ժողովին մէջ յայտարարեր է որ Յարանսիոյ արեւելեան քրիստոնեաներուն հովանաւորութեան խնդիրը բոլորովին պայէն կախուած չէ. ճիշդ է Յարանսիոյ ազգեցութիւնը պիտի թուլնայ եթէ Պապը ընդդիմագրէ. բայց չը պէտք է մոռնալ որ Յարանսա մեծէն առաջ ազգեցութիւն ունի իր զինուորական ուժին չնորհիւ. Երեսփոխանական ժողովը ընդուներ է արտաքին գործոց նախարարի ելեւմտից հաշիկչիւսը. Վատիկանի քով եղած գեսպանին ոտնիկը յնչուած է այդ հաշիկչիւսի մէջ:

ՉԻՆԱՍԱՆ

Բեթերսպուրկէն նոյեմբեր 14ին կը հեռագրեն.

Չինաստանի մէջ պօքսերական մեծ շարժում մը կը պատրաստուի:

Չինաստանի գրգռիչներ բնակչութիւնը կը զրգռեն. Այն չինացին որ կը հրաժարի մասնակցել կսպաննուի. Իրօք կառավարութիւնը հրաման արձակած է այդ շարժման զեկաւարները հալածել, սակայն ի գուր. որովհետեւ բարձ. սպանները շարժմանը համակիր են. Վտանգը հետզհետէ կը մեծնայ:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Թօքթիէն նոյեմբեր 15ին կը հեռագրեն թէ զիշերը ընդհանուր յարձակում սկսուեր է Բորթ Արթուրին գէմ. Կուրծք կուրծքի կատաղի ճակատամարտ մը տեղի ունեցեր է որուն հետեւանքները դեռ յայտնի չեն:

Անգլիական արտաքին գործոց նախարարը նաւատէրէրը կը զգուշացնէ քարածուխ բեռնելով չընկերակցին առաջալծիկեան նաւատորմիդին. Այդ հրամանին չը հնազանդողները տուգանքի պիտի ենթարկուին և իրենց նաւերը պիտի գրաւուի:

Պատերազմի գաշտէն կը հաղորդեն որ ճարտանցիները կրկին յարձակողական գիրք պէտք է բռնեն մինչեւ ճախէ գետին և իր վտակներուն սառելը, որ իշներն ալ կսեն թէ անոնք կը սպանն Բորթ Արթուրի անկումին որպէսզի նոր 50 հազար զօրք եւս ունենան:

Մուկտէնէն առաջ թերթի մը կը հեռագրեն նոյեմբեր 7ին թէ հոն ձերբակալուեր է ճարտանցի լրտես մը, որ լաւ ուսերէն կը խօսի եզեր. այդ լրտեսը իսկոյն կախեր են:

Ճարտանցիներուն շարունակ օգնութիւն կը հաանի, Բորթ Արթուրը տիրապետելու համար:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒ

Սեբաստացի Միհրան Մ. Ժամկուեան միջանասակ և թխագէմ 35 տարեկան երիտասարդ մը, որ Պանքայի ցոյցէն 3 օր վերջը անյայտացեր է, կը խնդրուի ով որ գիտէ անոր հասցէն թող իմացնէ իր ծնողներուն, որք այժմ Վառնա կը գտնուին, հետեւեալ հասցէին.

Մուսալիս փոստանէն զիմաց Կօրկի ներկարար Նշան Մ. Ժամկուեան (Պուլկարիս) Վառնա

ՐԱԺԱՆԱԳՐՆԵՐՈՒՄ

Տարին վերջանալու մօտ է և մեր բաժանորդներէն շատերը զեռ իրենց բաժնեկիները չեն վճարած:

Կան և այնպիսիները որոնք երկու տարեկան պարտք ունին. Ինչպէս կելուի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթ տէմբը ձրի կառնենք, գրաշարները ու տպարաններն ալ ձրի կախատին և մենք հաց չենք ուտեր, այլ օղով կապրինք:

Ինչ մը ազնիւ ըլլալու են մեր չը վճարող բաժանորդները, մասնաւոր անոր համար որ մենք երբէք ասոնց բաժանորդներու պահանջին թերթ չենք զրկեր մարդու: Պահանջող և իր պարտականութիւնը կատարելու տարրական զգացումէն զուրկ չը պիտի ըլլայ:

Սմբազուրեթիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵՂԸ

Ենորհակալութեամբ ընդունեցինք Հայ Ուսանողական Միութեան հրատարակած Հայաստանի Քարտէզը, շքեղ կազմով:

Քարտէզի գինն է մէկ ֆրանկ Ռուսաստանում կէս ռուպլի. Ամեն հայ պարտաւոր է ունենալ այս սիրուն և աման ու բաւական խընամքով պատրաստուած քարտէզը:

Հասցէ՝

Իււնիօն Տէ Էսիսեան Արեւելիկ Տ'հորայ Քիւ ռ լիֆօլ ռը Եիւի ժընէվ

ОТГОВОРНИЕЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна